Ալբերտ Բեգջանեանի տիկնիկային ներկայացումը՝ Իրանի «ՄՈԲԱՐԱՔ» փառատօնում

Չորեքշաբթի, 10 Օգոստոսի 2016 10:20

Չեխովի «Շնիկով կինը», որը Ալբերտ Բեգջանեանի ձեւակերպմամբ պատրաստուել է տիկնիկային խաղարկութեան ձեւաչափերին համապատասխան, բեմականացուելու է Իրանի «Մոբարաք» տիկնիկային փառատօնում:
Ալբերտ Բեգջանեանը «ԱԼԻՔ»-ին յայտնեց նաեւ, որ «Ճամբրուկն ու փիսօ՝ շնիկը» իր առաջին ռեժիսորական փորձն է Իրանում, որի համար չի թաքցնում իր ուրախութիւնը:

«ԱԼԻՔ» - Չեխովի «Շնիկով կինը», որը Ալբերտ Բեգջանեանի ձեւակերպմամբ պատրաստուել է տիկնիկային խաղարկութեան ձեւաչափերին համապատասխան, բեմականացուելու է Իրանի «Մոբարաք» տիկնիկային փառատօնում:
Ալբերտ Բեգջանեանը «ԱԼԻՔ»-ին յայտնեց նաեւ, որ «Ճամբրուկն ու փիսօ՝ շնիկը» իր առաջին ռեժիսորական փորձն է Իրանում, որի համար չի թաքցնում իր ուրախութիւնը: Նա յաւելեց նաեւ, որ Չեխովի «Շնիկով կինը» պատմուածքի հիման վրայ գրուած՝ «Եալտայի խաղը» ներկայացումն իր եւ ռեժիսոր Լեւոն

Հաֆթանի ջանքերով բեմ բարձրացաւ, որն հանդիսատեսի գնահատանքին արժանացաւ:
Նա այս մասին խօսելով, նշեց նաեւ, որ «Շնիկով կինը» պատմուածքի հետքերով տարուած դժուար էր այլ ուղղութիւններով գնալ, այդ իսկ պատճառով «Մոբարաք» փառատօնի մասին մտածելիս դարձեալ այդ գործն էր սեղանին, որպէս հիմնական թեմա:
Ալբերտ Բեգջանեանը խօսելով ժանրային իւրայատկութիւնների մասին յայտնեց, որ կիրարուած ձեւը կապուած տիկնիկների ներկայացման եւ խաղարկման հետ ճանաչուած է «ՄԱՐՕԹ» անունով եւ չպէտք է շփոթել այն «Մարիոնետ»-ի հետ:
«Եալտայի խաղը» ներկայացման պրոդիւսերն յաւելեց նաեւ, որ Իրանի «Մոբարաք» փառատօնի ընթացքը կարելի է գնահատել դրական, յատկապէս Մարզիէ Բորումանդի ստանձնած պատասխանատուութիւնից յետոյ: Ալբերտը «Մոբարաքը» համեմատելով միւս երկրներում տեղի ունեցած փառատօների հետ, այն մակարդակով առաւել բարձր հարթակ է համարում:
Ալբերտը մինչեւ իր սեփական գործի բեմ բարձրացնելը զբաղուել է իրանական, ինչպէս նաեւ հայաստանեան թատերախմբերին երկու երկրների փառատօներ ուղարկելու աշխատանքներով: Իր իսկ ասութեամբ, ռեժիսորի կարգավիճակում աւելի հեշտ է կարող պատկերացնել բեմական տեխնիկայի ու դրա տեղաշարժի հնարաւորութեան մասին, որով նաեւ կարելի է գործը ներկայացնել արտասահմանեան փառատօներին:
«Ճամբրուկն ու փիսօ՝ շնիկը» տիկնիկները բեմ են դուրս գալու Ֆահիմէ Աբեդինիի եւ Ռեզա Մալեքիի դերակատարութեամբ: Իսկ տիկնիկների պատրաստման գործը վստահուել է Անի Իսաղուլեանին:

- Ալբերտ Բեգիջանեան
- տիկնիկային թատրոն